



Ինչպե՞ս հետաքրքրական կին մը դառնալ թէ այրին եւ թէ ուրիշին համար

Երբեմն հարցուցած ես դուն քեզի թէ շրջապատի մէջ կամ սիրած անձիդ համար հրապուրիչ անձ մըն ես թէ ձանձրացուցիչ եւ վսուշի:

Թելադրանքներ կան որ կը յուշեն այր մարդուն, թէ կին մը կամ մատչելի եւ հետաքրքրական է կամ ալ գոց եւ անբացատրելի էակ մը:

Ինչպե՞ս կրնաս լաւ տպաւորութիւն թողուլ ոչ թէ անպայման սիրած անձիդ վրայ, այլ շրջապատիդ մէջ, գործիդ մէջ, գործատիրոջդ վրայ, ընկերուհիներուդ մէջ, յաճախորդներու վրայ:

Երբ հարցը այր մարդ մը գրաւելու կուգայ, առաջին տպաւորութիւնը քու տեսքդ է, հագուածքդ, բոյրդ, ժպիտդ: Բայց յարաբերութիւն մը առաջին տպաւորութեամբ չի վերջանար այլ միայն կրակի: Կարելորը այդ հանդիպումէն ետքն է ուր զգացական մասն է որ կը յաղթէ երեւոյթին եւ թակարդուած կը պահէ այրը անկողնիդ զգացումներուն վրայ:

Ուրեմն ֆիզիքական հրապուրով կրնաս կախարդել այրը սկսելու համար, բայց զգացական յարաբերութիւն մը ստեղծելու կարիքը ունիս անմիջապէս, շարունակելու համար այս յարաբերութիւնը: Առաջին տպաւորութիւնը շատ կարելոր է, որովհետեւ այրը շատ կ'ապրուի իր առաջին տեսածով եւ անմիջապէս իր մտքին մէջ կ'ընդունի կամ կը մերժէ քեզ: Եթէ մերժէ, շատ բան մը չի մնար քեզի ընելիք, եւ որքան ալ կատակես, ինչպիսի խօսքեր խօսիս եւ հաճոյակատար ըլլաս, ան կարող է երբեք չլսել ըսածներդ եթէ նախապէս գէշ տպաւորութիւն ունեցաւ վրայդ: Եւ եթէ շարունակես այս յարաբերութիւնը կամ ինքը տակաւին պահէ իր կապը հետդ, պարզապէս որովհետեւ ուրիշ ընկերուհի մը չունի այդ ժամանակ, դուն շատ պիտի յոգնիս իր ուշադրութիւնը գրաւելու համար կամ իր միտքը փոխելու համար:

Տեսքդ բաւարար գռաւի՞չ է, թէ անապահով ըլլալու տեսք մը ունիս: Կարծես պէտք ունիս իրեն որպէսզի աւելի ապահով զգաս: Արդեօք մտածա՞ծ ես թէ ինք ալ անապահով զգալու պատճառներ ունի:

Ամէն առաւօտ կ'արթննաս, նոյն ծրագիրը հետապնդելու համար եւ կ'ակնկալես նոր արդիւնքներ: Կարելի չէ փոփոխութեան ենթարկուի յարաբերութեան մը եղանակը երբ ոչ մէկ փոփոխութիւն բերած ես ապրելակերպիդ մէջ: Ամէն առաւօտ երբ կ'արթննաս, նոր ծրագիր մը փորձէ հետապնդել միօրինակութեանէ փախուստ տալու համար եւ աւելի հետաքրքրական անձ մը երեւնալու համար սիրածիդ կամ ուրիշ մէկուն համար: Դուն քեզ աւելի պիտի սիրես այդ օրը, պիտի զգաս որ քեզմով աւելի անձիք կը հետաքրքրուին այդ օրը, որովհետեւ ընդհանրապէս դուրս բան մը կատարած ես: Այդ օրուան ցերեկոյթին բանախօսը դուն էին այդ օրը: Տրամադրութիւնդ բարձր դուրս եկար: Վաղը վաղիդ տարեդարձն է. անհոգ մի գտնուիր եւ կոկիկ տարեդարձ մը սարքաւորէ, պիտի ուրախացնես եւ ուրախանաս եւ այրդ պիտի անպայման գնահատէ յոգնութիւնդ քան թէ անտարբեր անցնիս եւ օրդ մեռցնես ընկերուհիի մը հետ շատախօսութեամբ:

Գործունէայ եւ շրջանակի կին մը փորձէ ըլլալ որ հետեքրքրական ըլլաս թէ այրիդ եւ թէ շուրջիններուդ: Եթէ ժամանակդ կը ներէ, աւելորդ ժամերուդ դպրոց մը արձանագրուիր որեւէ նոր նիւթ մը իւրացնելու համար. կարելոր չէ ինչ մակարդակի վրայ է քու ընտարած նիւթդ:

Բաղդատմամբ ընկերոջդ, կամ շրջապատիդ մէջ հետդ գոյակցող անձերուն, եթէ գիտելիքներու պակաս ունիս եւ չես մասնակցիր երբ նիւթեր կը քննարկուին շուրջդ, կամ միայն ունկնդրող մըն ես եւ տեսակետներ չունիս արտայայտուելու եւ կարծիքդ փոխանցելու, կրնաս անհաղորդական եւ ձանձրացուցիչ դառնալ: Դժուար չէ քիչ մը աշխուժութիւն ցուցաբերելով տեր դառնալ յաւելեալ գիտութեանց եւ տեղեկութիւններու: Առջեւդ են աշխարհի բոլոր գիրքերն ու թերթերը եւ մանաւանդ հապարատը կայքէջերը:

Ֆիզիքական հրապուրիչ կողքին, այրիդ հետաքրքրական անձ մը ըլլալու համար պէտք է ստեղծես վիճակներ որոնք դուրս կը բերեն ձեզ միօրինակութեանէ: Հետաքրքրական կին մը ըլլալու համար նաեւ պէտք է գիտութիւն կուտակած ըլլաս եւ հետեւիս նորութիւններու: